

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

- ✓ 2013թ. մարտի 5-7-ը ՀՀ ՎՊԽ անդամ Վ. Դավթյանը և ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի առաջատար մասնագետ Ռ. Շաբոյանը մասնակցել են ք. Բոյուսելում (Բելգիա) կայացած «Նոր տեխնիկա և տեխնոլոգիաներ» խորագրով գիտաժողովին,
- ✓ 2013 թ. մարտի 7-23-ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը մասնակցել է ք. Փարիզում (Ֆրանսիա) կայացած «Մահացության պատճառական միտումները կովկասյան երկրներում» ծրագրի շրջանակում աշխատանքային քննարկումներին,
- ✓ 2013.թ. մարտի 19-21-ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի գլխավոր մասնագետ Ա. Դաշյանը մասնակցել է ք. Քիշնևում (Մոլդովա) կայացած «Միջազգային վիճակագրական դասակարգիչներ» խորագրով դասընթացին,
- ✓ 2013թ. մարտի 28-29-ը ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ. Միրզոյանը մասնակցել է ք. Մոսկվայում (Ռուսաստանի Դաշնություն) կայացած ԱՊՀ անդամ երկրների վիճակագրական ծառայությունների ղեկավարների խորհրդի 49-րդ հերթական նիստին,
- ✓ 2013թ. ապրիլի 4-ին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա. Սաֆյանը մասնակցել է ք. Լյուքսեմբուրգում (Լյուքսեմբուրգ) կայացած Վիճակագրական համագործակցության ԵՀԲ-Արևելքի ռազմավարության համար աշխատանքային խմբի երկրորդ հանդիպմանը,
- ✓ 2013 թ. ապրիլի 9-10-ը ՀՀ ՎՊԽ անդամ Յու. Պողոսյանը մասնակցել է ք. Կոպենհագենում (Դանիա) կայացած Բնապահպանական միասնական տեղեկատվական համակարգի ղեկավար կոմիտեի նիստին,

- ✓ 2013թ. ապրիլի 10-12-ը ՀՀ ՎՊԽ անդամ Գ. Անանյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի պարենային ապահովության վիճակագրության բաժնի պետ Ա. Ավետիսյանը և նույն բաժնի գլխավոր մասնագետ Տ. Բաբախանյանը մասնակցել են ք. Հռոմում (Իտալիա) կայացած «Պարենային հաշվեկշիռների բաղադրիչները» խորագրով եզրափակիչ աշխատանքային հանդիպմանը,
- ✓ 2013 թ. ապրիլի 18-19-ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ.Քալանթարյանը մասնակցել է ք. Լիսաբոնում (Պորտուգալիա) կայացած «Սոցիալական գործընկերություն ուղղված աշխատանքի հետ հմտությունների համապատասխանեցմանը» խորագրով սեմինարին,
- ✓ 2013թ. ապրիլի 17-19-ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի պետ Գ. Մարտիրոսյանը և ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի գլխավոր մասնագետ Ն. Աստվածատուրովան մասնակցել են ք. Մոսկվայում (Ռուսաստանի Դաշնություն) կայացած ԱՊՀ տարածաշրջանի երկրների վիճակագրական ծառայությունների մասնագետների աշխատանքային սեմինար-խորհրդակցությանը,
- ✓ 2013 թ. ապրիլի 18-19-ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը մասնակցել է ք. Բանգկոկում (Թաիլանդ) կայացած «Քաղաքացիական կացության գրանցումներ և բնական շարժի վիճակագրություն» խորագրով միջազգային գագաթաժողովին,
- ✓ 2013 թ. ապրիլի 21-26-ը ՀՀ ՎՊԽ անդամ Գ. Անանյանը մասնակցել է ք. Կոպենհագենում (Դանիա) կայացած «Էներգետիկայի վիճակագրության ռազմավարության դերը ազգային և միջազգային քաղաքականություններում» խորագրով միջազգային կոնֆերանսին: